նաև հայ գաղթականները ենթարկուած էին ինչպէս Շաքուայ շրջանում՝ նոյնպէս և աւելի հիւսիս լեռներում մահմեդական մոլլաների հալածանքին. աւանդութեան բառարանով քարացել են, այսինքն՝ կոտորուել ջնջուել են հայերը, եթէ իսլամութեան հակառակելով յամառել են իրենց կրօնի մէջ և առիթն են հանդիսացել այն բնորոշիչ լեգենդայի, որը յիշեցինք վերևում և որի նիւթը հէնց Դ. դարից է ծայր առնում Աղուանից առաջին հայ միսիոնարի՝ ս. Գրիգորիսի նահատակութեամբ։ Այդ բոլորը մանաւանդ իմանալուց յետոյ աւելի հետաքրքիր է դառնում այն հարցը, թէ ինչ հրաշքով իսլամից զերծ են կարողացել մնալ միայն Հակուեցիք՝ յանձին Արմաւրի Հաքուձ-Հարլցոց, և միւս տոհմերը, որոնք՝ խոստովանենք սակայն, ոչնչով չեն տարբերւում կաբարդայի չերքեզներից,—ոչ միայն արտաքին դիմագծերով, հագուստով, կերակրով, և ժողովրդական երգերով, այլ մինչև անգամ հոգով և ունակութեան տեսակով ու չափով։ Այո, հետաքրքիր է այդ հարցը և հունձք բազումք են, այլ դժբաղդաբար՝ մշակք սակաւք։

Գր. Տէր Պօղոսեան։

---

## ՎԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ

### Հայերէն ձեռագրեր

(Համառօտ նկարագրութիւն եւ յիշատակարաններ)

Շարունակութիւն *)

### Թ. 34. **)

### ԲԱՌԱՐԱՆ.

(Թղթ. նօտր. բոլ. գրչ. Ռ. Ճ. ԾԵ.)

393բ. Յիշատակարան. գրոյս։

Փառք ամենասո՜ւրբ երրորդութե՜ն եղական և միա՜ծութե՜ն. հօր և որդւոյ և հոգւոյն սրբոյ, որ ետ կարողութիւն, նուաստ և փանաքի անձինս ոհանէսի։ ամենից նուաստ պաշտօնէի։ կարգաւ աւագ սարկաւագի։ և որ գըպրուի՜ս ունել եմ առ ոտս։ տ՜ր պօղոս դափանեցի. որ և ի գիւղն տանծավերու. ա՜ծ ողորմի զիմ տ՜րն հոգւ։ որ ի վաղեմից ժամ՛նակ՛ց. ցանկացող եղէ. յայսմ,

*) Տես Արարատ, 1914, դեկտեմբեր։

**) Նախընթաց ձեռագրի համարը «Արարատի» յունուարի №-ում սխալմամբ տպուած է 54 փոխ. 55-ի։

*բառի գրքի. վ՜ս տարակուսանաց. դժվարիմ՟ց բանի. զոր և գրեալ գաղափարեցի, անշնորհ ձեռամբ իմով նուրբ և խոշոր. և արուեստ. մելանաւ. վ՜ս տոչորման սխրալի սրտոյս. որ վ՜ս ծրման գրոյս, յիշատակ. ինձ ոհանին և ծնողացն իմոց, և որք վայելեն զկնի իմ. Եւ արդ զըծագրեցի զսայ, ընդ հովանեաւ հոյակապ, և մեծավայելուչ Աթոռոյս. Սրբոյն Թովմայի. առաքելոյն. ի ժամանակս Թագաւորութե՟ պարսից. շահ սուլթան հուսէնին. և յառաջնորդութե՜ նահանգիս. գողթան գաւառիս. Տ՜ն յոհաննու բազմաշխատ վարդապետի, որ նորոգեաց զս՜բ աթոռոյս եկեղեցին, հանդերձ զանկակատնօք. և այլ կիսակատարն պ՛՛րսպիս. զորոյ զվարձքն. տ՜րն տ՜րնց հատուսցէ. Եւ արդ գրաւ եղև յայսմ գրգիս. ի Թվականութեանս արամեան. ռ՜ճ՜ծ՜ե՜. Թվին. և նոյեմբերի, ի՟գին. ի փառս և ի պատիւ. ամէնա՟հնեալ ս՜բ կուսին. մարիամու. Ա՟ծածնին. բարեխօսեայ ա՜մ հաւատացելոցն.*

Ծան. Ձեռագիր Բառարանիս մէջ կան բառեր, որ պակասում են տպագիր բառարաններում.

Մ. Վ.

## *Թ. 35.*

1. *ԲԱՌԱՐԱՆ Ս. ԳՐՈՑ.*
2. *ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Սիմէոն վ.ի Ջուղայեցւոյ.*
3. *«ԳՈՒՄԱՐՈՒՄՆ ՅՈԳՆԱԴԻՄԻ ԻՐՈՂՈՒԹԵԱՆՑ, ՍԱՀՄԱՆԱՑ, ԴԱՒԹԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԻ, ԵՒ ԱՅԼՈՑ ԻՄԱՍՏԱՍԻՐԱՑ. Ի մովսիսէ ումեմնէ ըստ տառից զասաւորութեան շարակարգեալ».*

(թղթ. Խոշր, բլկ. գր. ՌՃԸ=*1659*).

226բ. *Զմեղսամած ազարիայ, փծուն, գրչակս, յիշել մաղթեմ ի տէր. Թվին ռ՜ճ՟ը ումն. ծրեալ եղև.*

343բ. *Զփծուն գրչակ. ազարիայս յիշել մաղթեմ. զձեզ. Թվին ռ՜ճ՟ը ումն գրե՛՛լ եղև.*

405ա. *Փառք ամենաս՜ր երրորդութե՜ն անբաժանի երբեակ և մի անձնաւորութե՟ անզրաւ յաւիտենիւ ամէն. Ով ս՟ր մանկունք եկեղեցւոյ որք հանդիպիք ի սմա կարդալով կամ օրինակելով յիսուսիք երկնաընթաց աղօթս ձեր զմարկոս աբեղայս և ծնօղքն իմ զսիմէօն և զուռիջափարն զաւրգիսն և հռամսիմէն և կողակիցն իմ զուլչիչակն յիսուսիք ի միւսանգամ գալըստեանն որ աստ եկայք օրհնեալք հօր իմոյ ժառանգեցէք յանտրատւմ յարախութիւնան ամէն.*

## Թ. 37.

## ԹՈՒՂԹՔ ՊԱՒՂՈՍԻ ԱՌԱՔԵԼՈՅ ԵՒ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԵՍԱՅԵԱՅ.

(թղթ. բոլ. բւկ գրչ. ՉԿԷ=1318).

*18ա. Զփակակալ ս՟ր եկեղեցեացս զսարգիս կր՟ և զծնողսն իւր և զայլսն ա՟ յի՟շ ի ք՟ս։*

*19ա. Զփակակալ ս՟ր եկեղեցեացս զղազար կր՟. յի՟շ. և զյո-հաննէս և զմին այլ յո՟հ կր՟ և զծնողսն իւրեանց և զայլսն ա՟մ և զայլ հոգևոր եղբարքս զմեծ և զփոքր զկենդանիս և զհանգու-ցեալսն ի ք՟ս և զծնողսն իւրեանց յի՟շ ի ք՟ս աղաչեմ և դուք յիշեալ եղիջիք ի ք՟է ա՟յ մերոյ որ է ա՟հեալ յա՟ւ ամէն։*

*20ա. Զյովսէփ կր՟ և զծնողսն իւր և զեղբարսն և զքեռսն և զայլսն ա՟ յիշեսջիք ի ք՟ս յ՟ս ընդ նմին և զմեղուցեալ գրիչս և զայլսն ա՟ աղաչեմ և ա՟ծ ձեզ . . . . . . . . . . . . . . ։*

*21բ. Եւ արդ աղաչեմ զյակոբ մեղաւոր կր. և փցուն գրիչ յիշեսջիք յաղաւթս առ ա՟ծ և զծնողսն իմ զհայրն իմ մուսաւ և զմայրն զդալէ և զեղբարսն իմ զմուղալիկ և զյուսէփ և զխաչիկ և զյովաննէս և զսահակ և զքեռն իմ զոսկի և զշմոն. յիշեսջիք և զհոգևոր եղբայր իմ և ազգակից զյովսէփ կր՟ և զծնողսն իւր և և զեղբարսն զմովսէս և զմխիթար և զքեռսն և զայլսն ա՟. և ք՟ս ա՟ծ առհասարակ ողորմեսցի յիշողացդ և յիշեցելոցս և ա՟ հաւատացելոց ի ք՟ս մեծի փոքու առաջնոց և վերջնոց և որ յապա գալոց են մինչև ի կատարած աշխարհիս ամենեցուն ողորմեսցի ք՟ս ա՟ծ և զերկնից արքայութի՟ն շնորհեսցէ, ամէն։*

*48ա. զանարժան գծողս և զծնողսն իմ յիշեսջիք ի ք՟ս և ա՟ծ զձեզ։*

*48բ. Յայսմ վայրի փախստեայ եղեաք ի ս՟ր լեառնդ, ի հար-կապահանջողացն. և զի ոչ էր հնար փրծանիլ ի ձեռաց նոցա. և ոչ վ՟ս այնորիկ փախստեայ լինեաք զի զհարկն չտացուք։ այլ տայաք ուրախութ՟ր սրտից զի վ՟ս ք՟ի ՟ածպաշտութե՟ն էր այս։ և զայն մեզ ի պարծանս և ի քաւութի՟ և ի թողութի՟ մեղաց համարեաք որպէս և է խսկ ճշմարիտ։ այլ ի համբաւոյ նոցա փախ-չեաք ի լերինս և ի ծերպս վիմաց, զի եբրև զգազանս անընդելս յարձակէին ի վ՟րայ մեր և խողխողէին զմեզ։ և արդ աղաչեմ որ յանդորրութի՟ իցէք և յայլ ժ՟ամ յիշեսջիք ի ք՟ս զանարժան սուտ անուն ՟ա՟կ կ՟ր և զյուսէփ կ՟ր և զծնողսն մեր և զայլսն ա՟ և զա՟ հաւատացեալս ք՟ի և դուք յի՟շ եղ՟ . . . . . . . . . . . . ամէն։*

*50ա. Զգծողս և զծնողս իմ յիշեսջիք ի ք՟ս յ՟ս, զի յոյժ ողոր-մելի եմ։*

51ա. Զյա՟կ և զծնողսն իմ և զայլսն ամենայն յիշեսջիք ի ք՟ս յ՟ս։

53ա. Զանպիտանս յիշեսջիք յաղաւթս ձեր։

78բ. զմեղապարտս, և զյովսէփ կ՟ր և զծնողսն մեր և զայլս ՟ա յիշեսջիք ի տ՟ր. և ՟ած զձեզ յիշէ։

107բ. Զոսկի յիշեսջիք ի տ՟ր։

133ա. զգծողս յի՟շ ի ք՟ս և զ՟ա ազգատոհմն իմ և զուք յի՟շ լիջիք ի տ՟ր։

139բ. Զանարժան կ՟ր՟ զյ՟ակ և զյովսէփ յիշեսջիք ի ք՟ս յ՟ս, և զծնողսն մեր և զամենայն ազգայինսն մեր, և ՟ած զձեզ յիշէ։

150ա. Զանարժան ծառայքս զյ՟ակ և զյովսէփ կ՟՟ր յիշեսջիք ի տ՟ր ընդ նմին և զյոհաննէս կ՟՟ր. և զծնողսն մեր և զեղբարսն և զայլսն ՟ա, և ՟ած զձեզ յիշէ

166բ. Զյակոբ միայնակեաց և զյովսէփ միայնակեց և զծնողսն իւրեանց յի՟շ ի ք՟ս ընդ նմին և զգծողս և զհայրն իմ զմովսէս և զմայրն իմ զզալէ և զքեռն իմ զոսկի և զյովսէփ կ՟՟ր և զծնողն իւր և զ՟ա հաւատացեալս յի՟շ ի տ՟ր և զուք յիշեալ լիջիք ի ք՟է ՟այ մերոյ որ է ՟աւհեալ յաւիտեան։

183բ. Յիշեսջիք ի տ՟ր զեղբարսն իմ զյովսէփ և զխաչիկ և զյովաննէս և զսահակ և զմիւս զփոխեալն ի ք՟ս և զքեռն զոսկի և ՟ած զձեզ յիշեսցէ ամէն։

185բ. զանարժանքս յիշեսջիք ի ք՟ս և զծնողսն մեր և զեղբարսն մեր և զքեռսն և զայլսն ՟ա և զուք յիշեալք եղիջիք ի տ՟ր։

190ա. Զսարկաւագ կ՟՟ր և զծնողսն և զեղբարսն յի՟շ ի ք՟ս զի սպասաւորեաց գրոցս։

196բ. «ի նվաստ ծառայ զաքարայես շատ կարօտիւ ՟ո բարի հասցէ վերայգրեալ և պ՟րն եղբայր պետրոսին և ձեր հազ

205բ. Զմխիթար միայնակեաց յիշեսջիք ի ք՟ս։

211բ. Զստացող սորա զյովսէփ կ՟՟ր և զյակ և զծնողսն մեր և զեղբարսն և զքեռսն մեր և զայլսն ՟ա յիշեսջիք ի ք՟ս աղաչեմ և զուք յի՟շ եղիջիք ի ք՟է։

230բ. Ք՟ս ա՟ծ ողորմեայ յովսիփայ և յա՟կ և ծնողաց մերոց և ա՟ ազգականաց և ա՟ հաւատացելոց ի ք՟ս յ՟ս։

285բ. Զբարսեղս յիշել աղաչեմ։

289ա. Զանարժան ծառայքս զյա՟կ և զյովսէփ կ՟՟ր և զծնողսն մեր յի՟շ ի ք՟ս աղաչեմ։

294բ. Զյովսէփ հեզիկ կ՟՟ր և զծնողսն իւր և զեղբարսն զմովսէս և զմխիթար և զքեռսն և զայլսն ՟ա յիշեսջիք ի ք՟ս ընդ նմին զանարժան ծառայս և զիմսն ՟ա, և տ՟ր հասարակաց ողորմեսցի ձեզ և մեզ և ՟ա հաւատացելոց ի ք՟ս յ՟ս ամէն։

314ա. աւաղ թէ քանի դառն է աւուրքս և քանի փախստեա

և մ՟հ կրեցի ի գրելս ի՛ հարկապահանջողաց և յայլանդակ բերման ժամանակիս: զյովսէփ կ՟ր և զանարժան ծառայս և զծնողսն մեր և զայլսն ա՟ յի՟շ ի ք՟ս աղաչեմ. և տ՟ր հասարակաց ողորմեսցի ձեզ և մեզ և ՟ա հաւատացելոց. ամէն:

317բ. Զյովսէփ միակեց շինող ս՟ր նշանիս յի՟շ ի ք՟ս և զիւրսն ՟ա յի՟շե:

318ա. Զյակոբ գանձակեցի գրիչ յիշեսջիք ի ք՟ս աղաչեմ:

319բ. Փառք միոյ միայնոյ միաստական երրորդութե՟ն. հաւասարապատիւ տ՟րութեանն, և անեղծ արարչութեանն, ի կենդանեաց անմահ ս՟ր զուարթնոցն, և ի մահկանացուացս հողեղինացս, և յանշնչականաց հաստեղոց գոյից, վայելչական գոհաբանութեամբ, աւրհնութի՟ և երկրպագութիւն յայժմու յաւիտենիս և յապագայ մշտնջենաւորին և յանկէտ յաւիտենին. յաւիտեանս. ամէն: եղիցի եղիցի: որ հասոյց զիս յաւարտ մատենիս ՟ածային տառիցս առաքելոյն պաւղոսի և եսայեայ մարգարէի: Արդ յամս վերադիտութե՟ երջանիկ հոգևոր տ՟ն զաքարիայի հայոց դիտապետի, և յառաջնորդութե՟ ս՟ր ուխտիս հոգէկիր վեհիմաստ հովւապետի տ՟ն պետրոսի և նորին յովասափի գրեցաւ տառս ՟ածային ընդ հովանեաւ սրբոյ նշանիս վարագայ յոյժ տառապանաւք և նեղութեամբ. ձեռամբ մեղապարտ և անարժան կր՟ի յա՟կ. ի թուիս հայկազնեան տումարիս. ութնհարիւրորդի, վաթսներորդի, ութներորդի. յայսմ ամի որում ծփի ամենայն երամք ք՟սափառաց. ի շնչմանէ նետողական ազգին զարբանդազոլն զանի, փչելով ի նա սատանայ հարկ հրամայեաց առնուլ յամենայն քրիստոնէից վասն հաւատոցն որ ի ք՟ս. և նշան կապոյտ հրամայեաց կարել ի վերայ թիկանց հաւատացելոցս: եւ առաւել ի կրաւնաւորացս հարկ առնուլն առանց զանի հրամանին: յետոյ երիցս երանեալ երջանիկ հայրապետն զաքարիայ հետ զանին գնացեալ մինչև ի բարելոն ամ մի ողջոյն և աղեխ առեալ ի նմանէ զկրաւնաւորքս և զքահանայսն ազատեաց ի հարկապահանջութենէ: այլ յաշխարհականացն և ի տղայոցն առնուլն. որոց զարգիս խաղաղական կենաւք շնորհեսցէ նմայ տ՟ր և իւրոցն ամենայն. և զելիցն յիշատակ աւրհնութ՟ր ի ք՟ս:

Եւ յայսմ ամի զարունն առին զհարկն, և աշունն զանն մեռաւ. և այլ եկին ոմն անուն ազլայղու, սինթամուր և հասանթամուր ռ՟գ՟ճ մարդով և կրկին հարկ առին յոյժ անչափ և ոչ ոք ընդդիմացաւ նոցա: և վանորայքս որ ազատ էին զոր ըմբռնեցին անհնարին տանջանաւք չարչարեցին և անչափ դ՟կ առին. մանաւանդ ս՟ր ուխտս մատնեցաւ ի ձեռս նոցա յանկարծակի զաղտաբար եկին յերեկունն և ամենեքեան փախեաք և զորս ըմբռնեցին անհնարին տանջեցին որ ոչ կարեմք պատմել և քաղաքի տաճկնին

բազում ինչք տուին և հազիւ թափեցին ի ձեռաց նոցա. և այլքս որ փախեաք այլ չիշխեցաք դառնալ ի վանքս զի հանապազ զօրւ և զգիշեր ի խնդիր ելանէին մեզ. և մեք աճապարեալք ի նոցանէ ահիւ և դողութ՟բ կէաք զցայգ և զցերեկ ի ս՟բ լերինդ ի խորշս և ի ծերպս վիմաց, և նոքա ամեն աւր գային և զեկեղեաց դռներն և զխցերոյն զամէն բացին և յաւարի տարան զինչ որ գտան. բայց ս՟բ յոհաննիսա դուռն միայն մնաց. վ՟ս զի ճգնազգեաց փակակալս մեր ղազար կ՟ր զան և զերկիւղ ի բաց եղեալ և յեկեղեցին կացեալ բազում աւուրս այլ ընկերաւք, և ս՟բ նշանն պահեաց զնոսա, և ափշեցոյց զսիրտս այլազգեացն որ ոչ մաքառեցան ընդ դուռն երկաթի: Եւ այլ բազում վիշտ և նեղութի՟ և տառապանք կրեցաք յամենայն դիմաց յամարանի և ի ձմերանի փախստեա լինելով և բացաւթեայ կելով ի ս՟բ լերինդ. և այլ դժնդակ նեղութի՟ որ ոչ կարեմք պատմել: և մեք ամէն կրաւնաւորքս, կ՟, աւելի. երիցս երանեալ առաջնորդաւս մերով տ՟ր պե՟ որ ոչ եթող վարատիլ մի ոք ի մէնջ, որոց զարդիս խաղաղական կենաւք շնորհեսցէ սոցա տ՟ր ա՟ծ միաբան ուխտիս, և զելիցն յիշատակաւ աւրհնութ՟բ ի ք՟ս:

Եւ մեք բազում ժամանակս զայս նեղութի՟ս կրելով և առաւել քան զսոյնս, և առ սէր ս՟բ նշանիս և ի սա ապաւինելով ի ս՟բ ուխտէս ոչ հեռացաք. քաղաքն և երկիրս ամէն այսր անդր փախեան լուր մարդատասան մնաց, և մեք ի տեղս հաստատուն կացաք վ՟ս ս՟բ նշանի սիրոյս:

Եւ արդ աղաչեմք զամենեսեան զընակիչ ս՟բ ուխտիս զհոգևոր հարսդ և զեղբարսդ որ յանդորրութե՟ իցէք և յայլժամ յիշեսջիք զայժմու նեղեալքս ի՛ ս՟բ յաղաւթ ձեր և ի՛ մեղսաքաւիչ ս՟բ պատարագն. և առաւել զպատուական առաջնորդս մեր զտ՟ր պետրոս և զտ՟ր սարգիս և զյովասափ, և զտ՟ր աւետիս, և զտ՟ր յովսէփ, և զփակակալս մեր զճգնազգեաց կ՟ր ղազար, և զերկրորդ նորին յոհաննէս քեռորդի տ՟ն պետրոսի, և զստեփաննոս ծերունի, և զայլ հոգևոր հարս և զեղբարս, և զհայրփոխան սարգիս որ բազում վիշտս կրեաց, և զյովաննէս, և զամենեսեան որ ի սմա են բնակեալ զմեծ և զփոքր, և առ հասարակ զա՟ հաւատացեալս յիշեսջիք ի ք՟ս: Ընդ նոսին հուսկ յետոյ քան զամենեսեան յիշեջիք ի տ՟ր զյովսէփ կ՟ր. և զմեղապարտ ծառայս յ՟ակ գրիչ և զմեր ծնողսն և զեղբարսն և զքեռսն մեր և զայլ ազգայինսն, զի թերես ողորմեսցի մեղուցելոցս ք՟ս և տ՟ր ա՟ծ առ հասարակ ողորմեսցի ձեզ և մեզ և ա՟մ հաւատացելոց ի նա. ամէն:

Աստանաւր յիշեսջիք ի ք՟ս զհանգուցեալ ննջեցեալս զառաջնորդ ս՟բ ուխտիս զմեծն զտ՟ր պետրոս և երկրորդ նորա զկարապետ, և զյովսէփ միայնակեց զանձակեցի որ յաւուրս սորա

և հրամանաւ և կամաւ նորին զս՟ր նշանն ի հիմանէ վերստին շինեալ նորոգեաց. և զյակոբ միայնակեաց զոր բազում զաւրութե՟ս եցոյց և արար տ՟ր ի ձեռս նորա, և զհոգևոր հայրն մեր վարդան կ՟ր ուսուցիչն իմ, և զթումայ կ՟ր, և զգանձակեցի վարդան, և զստեփաննոս անձղնապատեցի, և զվարդան և զստեփաննոս միայնակեացք, և զյովսէփ կ՟ր և զայլսն ՟ա որ յաւուրս մեր և յառաջ քան զմեզ փոխեցան ի տ՟ր. յիշեսջիք ի ք՟ս յ՟ս և զմերսն ընդ նոսին, և ք՟ս յիշողացդ և յիշեցելոցն առ հասարակ ողորմեսցի, ամէն:

Արդ այսմ ա՟ծային տառիցս ստացող եղէ ես յակոբ անարժան կ՟ր յետնեալս ի գործառնութենէ ի՟ համակարգակցաց իմոց, և ձեռն ի գործ արկեալ գրեցի զսա մեծաւ աշխատանաւք և բազում նեղութե՟ կրելով յայլազգեաց: Բայց գրեցաւ սա ի հոռակապ և ի հռչակաւոր ս՟ր ուխտս վարագայ ընդ հովանեաւ ա՟ծընկալ ս՟ր նշանիս, յառաջնորդութե՟ երիցս երանեալ տ՟ն պետրոսի և նորին երկրորդի յովսափի, որոց զարդիս խաղաղական կենաւք շնորհեսցէ սոցա միաբան ուխտիս բարէխնամն ա՟ծ. և զելիցն յիշատակաւ աւրհնութ՟բ ի ք՟ս: Արդ գրեցի զսա յիշատակ ինձ և յովսիփայ կ՟ր որ է իմ ազգական որ զթուղթս կոկեաց և այլ ամենայն իրաւք սպասաւորեաց և աւգնական եղև գրելոյ սորա առաւել քան զիս. և ի կատարման սորա մանկական տիաւք փոխեցաւ ի՟ ք՟ս. վ՟ս որոյ զերկնից արքայութի՟ն շնորհեսցէ նմա տ՟ր ա՟ծ ընդ ա՟մ սուրբս: ամէն: վ՟ս զի գրեցի զսա յիշատակ ինձ և նմա. և ծնողաց մերոց և եղբարց մերոց և քերց մերոց, և այլ մասնաւոր ազգականաց և աշխատողաց ով ոք որ կարդայք կամ աւրինակէք սրտի մտաւք ասացէք թո՛ղ ք՟ս զյանցանս յա՟կ և յովսիփայ, և ծնողաց և եղբարց և քերցն իւրեանց և զ՟ա ազգականաց համաւրէն և զ՟ա հաւատացելոց և զկարդացողաց և զլսողացն, ամէն: շատ փախստական այսր և անդր տատանեցա. թէ սխալանք գտանէք կամ գրչի փոփոխումն թողութի՟ արարէք և ուղղեցէք:

Բայց աղաչեմ զսրբազան սպասաւորք ս՟ր նշանիս վարագայ զհոգևոր զհարսդ և զեղբարսդ ընդունել զսակաւ աշխատութի՟ս մեր. և յիշել ի ս՟ր յաղաւթս ձեր զմեղապարտ գրող և զստացող սորա զյա՟կ և զյովսէփ կ՟ր, և զծնողսն իմ զմուսաւ և զդալէ և զշմոն, և զեղբարսն իմ զմուղալիկ և զյովսէփ և զխաչիկ և զյովաննէս և զսահակ, և զքոյրն իմ զոսկի, և զյովսիփայ ծնողսն և զեղբարսն և զքոյրսն և զայլսն ամենայն. և որ այլ աշխատ և աւգնողք եղեն գրելոյ սորա և զ՟ա հաւատացելոց. ասել հայրաբար թող ք՟ս ա՟ծ զմեղս գրողի սորա և ստացողի և ծնողաց իւրեանց և եղբարց և քերց և զայլ ազգականացն և զ՟ա հաւատացելոց: և ք՟ս որդին ա՟յ ազատեսցէ զձեզ զամենեսեան ի կա-

պանաց մեղաց ձեր ննջեցելովքն հանդերձ և զերկնից արքայութիւնն շնորհեսցէ ձեզ ընդ ա՟ ս՟րս իւր: ամէն:

Ով երկնագումար ա՟ծախումբ դասք լուսերամք սրբազանք սպասաւորք ա՟ծընկալ ս՟ր Նշանիս վարագայ առաջնորդք և փակակալք և այլ հոգևոր հարք և եղբարք զձեզ աղաչեմ տ՟ր և յերեսս անկեալ մաղթեմ հառաչանաւք և հայցեմ ի սրբութենէդ ձերմէ, զի թէ ուր ուրեք անկանիցիմք ի միտս և ա՟ծ քաղցրացուսցէ զկամս սրտից ձերոց յիշել զանարժան ծառայքս զյովսէփ և զգծողս յա՞կ և զմերսն ա՟ ի ս՟ր յաղաւթս ձեր և մեղաքաւիչ ս՟ր պատարագաւ յիշեսջիք զմեզ. զի յոյժ կարաւտ եմք ողորմութե՟ ի տ՟է. զի սակաւ մի թողցին մեզ մթերեալ բազմութիւն մեղաց մերոց:

Եւ ք՟ս ա՟ծ յիշողացդ և յիշեցելոցս և համաւրէն ամենայն հաւատացելոց առ հասարակ ողորմեսցի և թողցէ զմեղս ամենեցուն և զերկնից արքայութի՟ն շնորհեսցէ ձեզ ք՟ս ա՟ծ և ընդ ա՟ ս՟ր զասեսցէ զամենեսեան. ամէն: և որք յիշէքդ զմեզ կրկին յիշեալք և աւրհնեալք եղիջիք ի ք՟է ա՟յ մերոյ որ է աւրհնեալ յ՟ա գոյից յիմանալեաց, և ի զգալեաց, ի մտաւորաց, և համայն ի բոլորից սեռական կենդանեաց. սկզբանց և առ յապա. անդր քան զյաւիտեան. և յաւիտենից յաւիտեանս. ամէն:

---

321բ. Յի՟շ և զքեռորդին իմ զսարգիս կ՞ր և զծնողսն իւր և զեղբարսն և զքեռսն իւր, և դուք յի՟շ լիջիք:

---

323ա. Փառք ամենաս՟ր երրորդութե՟, և միա՟ծութե՟, հաւր և որդւոյ և սրբոյ հոգւոյն այժմ և:

Դարձեալ յիշեցէք զվերջին նորոգող սուրբ գրոյս, զտէր Նիկողայոսն, որ ետ կազմել զս՞ր տառս յիշատակ հոգւոյ իւրոյ և ա՟մ արեան մերձօրացն, հայրն իւր աղբղուլի և մայրն աջարխանն որ հանգուցեալ են առ տ՟ր: և ես աղաչեմ զամենեսեանդ որք հանդիպիք սըմա և լի բերանով ա՟ծ ողորմի ասացէք: և ա՟ծ ձեզ ողորմեսցի Ամէն:

Կազմեցաւ ս՟ր գիրքս. պաւղոսի, և եսայի, ձեռամբ սուտանուն, մր՟գրչ իրիցի: ի գեղաքաղաքն ագուլաց, ի դուռն ս՟ր շմաւոնի եկղ՟ցւյ ի թվաբերութի՟ հայկազան տոմարի ռ. և ձ՟թ՟ ի կաթողիկոսութի՟ հայոց տ՟ն փիլիպպոսի: և առաջնորդութի՟ մերոյ վանից խաչատուր վարդապետին: Ա՟ծ զինքն յերկար ամաւք արասցէ ամէն:

Մեսրոպ վարդ. Մախսուդեանց.